ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ
<< ԳԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ - Ի
ՏՆՕՐԵՆ

Գ. Գայ Իսահակյան փ,
Հեռախոս 077 -28-80-57

էլեկտրոնային հասցե
gay.mankapartez@mail.ru .

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Գայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ 8 դաստիարակի (0,56) դրույքաչափով, երաժշտական դաստիարակի (1) դրույքաչափով և մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի (1) դրույքաչափով, թափուր պաշտոնները համալրելու համար:

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1.դիմում (Ձև 1)
2.կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ
3.անձը հաստատող փաստաթուղթ
4.աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ
5.ինքնակենսագրություն ՝ Ձև 4
6.լուսանկար 3x4չափի
7.այլ պետության քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8.ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:
9.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
10.որակավորման տարակարգ(առկայության դեպքում

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ապրիլի 22 -ը ներառյալ, ամեն օր ժամը՝ 10:00ից - 16:00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի 2024թվականի ապրիլի 29-ին ժամը՝ 14:00-ին, <<Գայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքում / գ. Գայ ,Իսահակյան 1 փ / 22/

Տեղեկությունների համար զանգահարել 077-288-057 հեռախոսահամարով: